ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N - Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԱԳ ԵՎ ԱԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՔԱՐՄՇԱԿՄԵՔԵՆԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի <<է>> և 9-րդ հոդվածի <<ե>> կետերի պահանջները և նկատի ունենալով Մինաս Ավետիսյանի որմնանկարներն իրենց կողմից վերականգնելու վերաբերյալ Գյումրու քաղաքապետի և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդա-սարյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առաջարկները Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել

1) Գյումրու քաղաքապետարանի միջոցների հաշվին իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող, Գյումրի քաղաքի <<Քարմշակմեքենա>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող Մինաս Ավետիսյանի <<Հայկական հովվերգություն>> որմնանկարի տեղափոխման աշխատանքները,

2) <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին իրականացնել <<Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող, Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող Մինաս Ավետիսյան <<Գորգ են գործում>> որմնանկարի տեղափոխման աշխատանքները:

2. Սահմանել, որ

1) Գյումրի քաղաքի <<Քարմշակմեքենա>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Հայկական հովվերգություն>> որմնանկարը տեղափոխվում է Գյումրի քաղաքի Վարդանանց 1 հասցեում գտնվող Գյումրու քաղաքապետարանի շենք,

2) Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Գորգ են գործում>> որմնանկարը տեղափոխվում է Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի 218 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված (ենթահամար՝ թիվ 4.871) շենքի սրահ:

3. Առաջարկել Գյումրու քաղաքապետին և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենին՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված աշխատանքներն իրականացնելու նպատակով մասնագիտացված կազմակերպության հետ կնքել պայմանգիր՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության հետ:

4. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված աշխատանքներն ավարտվելուց հետո՝

1) Գյումրու քաղաքապետարանի և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել նշված որմնանկարների անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու պայմանագիր և պահպանական պարտավորագիր:

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված պայմանագրերը կնքելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել <<Հայաստանի Հանրապետության կառավարություն 2004 թվականի սեպտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին>> N 1270-Ն որոշման մեջ

փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

3) սահմանված կարգով ապահովել վերականգնման աշխատանքների իրականացման թույլտվության տրամադրումը և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացումը:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԱԳ ԵՎ ԱԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՔԱՐՄՇԱԿՄԵՔԵՆԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանի և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> ՍՊԸ-ի միջոցներով Գյումրի քաղաքի <<Քարմշակմեքենա>> փակ բաժնետիրական ընկերության ու <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ նախկին ճաշարանների շենքերում գտնվող որմնանկարները տեղափոխելու և վերականգնելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Գյումրու քաղաքապետարանի և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> ՍՊԸ-ի միջոցներով Գյումրու քաղաքապետարանի նիստերի դահլիճ և Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի 218 հասցեում վերակառուցվող շենքի սրահ տեղափոխելու, տեղում վերականգնելու և ամրացնելու միջոցով Մինաս Ավետիսյանի <<Հայկական հովվերգություն>> ու <<Գորգ են գործում>> որմնանկարները ոչնչացումից փրկելու անհրաժեշտությամբ:

Գյումրու համայնքային իշխանությունները, հասարակական կազմակերպություններն ու մշակույթի և արվեստի գործիչները քանիցս դիմել են Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիում վերականգնելու և Գյումրիում տեղադրելու առաջարկով:

Մշակվել է որոշման նախագիծ, համաձայն որի <<Հայկական հովվերգություն>> որմնանկարը (կոմպոզիցիայի 3 հատվածներ, չափսերը՝ մաս 1-ին՝ 9,50x4,30 մ, մաս 2-րդ՝ 14,80 մ x 4,30 մ) վերականգնելուց հետո ամրացնել Գյումրու քաղաքապետարանի նորակառույց շենքի նիստերի դահլիճում, իսկ <<Գորգ են գործում>> որմնանկարը (5,75 մ x 3 մ)՝ Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի 218 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված շենքի սրահում, ինչի արդյունքում երկու որմնանկարները կմնան Գյումրի քաղաքում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԱԳ ԵՎ ԱԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՔԱՐՄՇԱԿՄԵՔԵՆԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանի և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> ՍՊԸ-ի միջոցներով Գյումրի քաղաքի <<Քարմշակմեքենա>> փակ բաժնետիրական ընկերության ու <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ նախկին ճաշարանների շենքերում գտնվող որմնանկարները տեղափոխելու և վերականգնելու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԱԳ ԵՎ ԱԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ՔԱՐՄՇԱԿՄԵՔԵՆԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանի և <<ԱԳ ԵՎ ԱԱ Բաղդասարյաններ>> ՍՊԸ-ի միջոցներով Գյումրի քաղաքի <<Քարմշակմեքենա>> փակ բաժնետիրական ընկերության ու <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ նախկին ճաշարանների շենքերում գտնվող որմնանկարները տեղափոխելու և վերականգնելու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսեր և եկամուտներ չի առաջացնում: